

## Նվարդ Վարդանյան

ԵՊՀ

### ԴԱՎԻԴ ՖՈԵՆԿԻՆՈՍԻ «ՇԱՐԼՈԹ» ՎԵՊԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՈՒ ՈՃԱԿԱՆ ՀՆԱՐՔՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՐՏԱՑՈԼՈՒՄԸ ՀԱՅԵՐԵՆ ՏԱՐԲԵՐԱԿՈՒՄ

*«Շարլոթ» չափածո վեպի համար Դավիդ Ֆոենկինոսը գտել է ճիշտ տոնայնություն, առանց որի կոպիտ ու հասարակ հնչեղություն կունենար ստեղծագործությունը: Առաջին իսկ տողերից այդ տոնայնությունը պարտադրում է թարգմանչին ենթարկվել հեղինակի վարպետությանը: Վեպում ներկայացված է Շարլոթ Սալոմոնի կյանքի պատմությունը, որտեղ առաջ է քաշվում հիմնականում հեղինակի կասկածները և հետազոտումները՝ սյուժետային գծի հետ համատեղ տանելով դրանք: Արդունքն ապշեցուցիչ է: Սա ոչ պատմական գիրք է, ոչ պատմվածք: Լուրջ վեպ է, որի թեմայի ընտրության հարցում վիպասանը նույնպես լուրջ գնահատականի է արժանանում: Ներկայացնում է այն բոլոր փուլերը, որ հասցնում են հրեաների ոչնչացմանը, ճիշտ ընտրված բառապաշարով: Շարլոթն իր փրկությունը գտնում է նկարչության մեջ: Հակառակ դժոխային ու մռայլ կյանքին, նրա կտավներում իշխում են պայծառ գույ-*

*ները: Նույնը երևում է վեպում՝ հեղինակի հնարամտության շնորհիվ: Թարգմանիչը հայտնաբերել է այս բոլոր հնարքները և ճշգրտորեն վերարտադրել հայերեն տարբերակում:*

**Հիմնաբառեր.** գրական վարպետություն, վեպի շարադրանք, գրական հետազոտություն, սյուժետային գիծ, ներքին ուժ, ոճական հնարք, գեղարվեստական պատկեր, լեզվաոճական տարբերանշան, նկարագրական պատկերավոր արտահայտություն, համարժեք վերարտադրություն:

Դավիդ Ֆոենկինոսը ժամանակից ֆրանսիացի վիպասան է, կինոյի, թատրոնի, մուլտիպլիկացիոն ֆիլմերի սցենարների, մոտ երկու տասնյակ վեպերի հեղինակ, մի շարք մրցանակների դափնեկիր: Ֆոենկինոսը ծնվել է 1974թ. Փարիզում: Ավարտել է Սորբոնի համալսարանի բանասիրական ֆակուլտետը: 2002թ. հրատարակվել է նրա առաջին վեպը՝ «Հիմարության շրջադասումը», իսկ 2004թ. լույս տեսած «Կնոջս էրոտիկ կարողությունը» վեպի համար Ռոժե-Նիմիեի անվան մրցանակի է արժանացել: Նրան մեծ ճանաչում է բերել 2009թ. լույս տեսած «Նրբաճաշակություն» վեպը: 2014թ. հրատարակվել է «Շարլոթ» չափածո վեպը, որն իրական պատմություն է հրեա գեղանկարչուհու մասին, ում ստեղծագործությունները ցուցադրված են Ամստերդամի հրեական թանգարանում: «Շարլոթ» վեպի համար հեղինակն արժանացել է Ռենոդ և Լիցեականների

Գոնքուր գրական մրցանակին:

«Շարլոթ» վեպի բովանդակությունն ու կառուցվածքը սերտորեն փոխկապակցված են սյուժետային գծով: Դրանով է պայմանավորված սույն վեպի անհատականությունն ու առանձնահատկությունը:

Վեպում նկարագրված է գեղանկարչուհի Շարլոթ Սալոմոնի կյանքը, որն ընդհատվել է քսանվեց տարեկան հասակում՝ զավակի լույս աշխարհ գալուց մի քանի ամիս առաջ: Շարլոթը մանկությունն անց է կացրել Բեռլինում՝ ընտանեկան ողբերգության միջավայրում: Այնուհետև երկրում ծավալվել են քաղաքական դեպքեր, որի արդյունքում լայնածավալ հետապնդում ու հալածանք է սկսվել հրեաների դեմ: Երկրում տիրող նացիստական համակարգի կողմից Շարլոթը մերժվում և մեկուսացվում է հասարակությունից, հալածանքների են ենթարկվում նաև բժիշկ հայրը, երգչուհի մայրացուն, բարեկամ հրեա ընկերները, շատ գիտնականներ, գործիչներ, արվեստագետներ, որոնց արքունի են ուղարկում կամ բանտերում խոշտանգում, սպանում են գազախցիկներում: Շարլոթին, որպես անչափահաս աղջկա, ծնողների և պաշտոնյա բարեգութ ծանոթների օգնությամբ, փախցնում են Ֆրանսիա, ուր արդեն պատսպարվել էին տատն ու պապը: Հետագայում իր երկրում՝ Գերմանիայում, ճաշակած սիրո հարատև կիրքը արտացոլվելու էր նրա կտավներում ու նոթերում կյանքից զրկվելուց քիչ առաջ: Ֆրանսիայի հարավում ապաստան է գտնում մի հարուստ կնոջ ամառանոցում և թվում էր ոչ մի

արհավիրք այլևս չի սպառնում նրան: Տարագրության մեջ նա հանդիպում է բարի մարդկանց, որոնց հովանավորությամբ լիովին տրվում է արվեստին: Նա ստանձնում է նաև մեծ մոր ու մեծ հոր խնամքը: Շարլոթը կտավին է հանձնում հարազատների, բարեկամների (բացի պապիկից), բարերարների, նույն հաստատությունում ապաստան գտած որբ երեխաների դիմանկարներ, բնապատկերներ: Նրա արվեստը նորարարությամբ է տոգորված, անհատական ոճով ստեղծված շարքերով, գծապատկերներով: Բացի այդ նա գեղարվեստորեն գրի է առնում իր կյանքի պատմությունը, ուր տեղ են գտնում կտավների բոլոր կերպարները: Գիտակցելով գլխին կախված վտանգը, քանզի գերմանացիները մուտք են գործում նաև Ֆրանսիա, նա իր ստեղծագործությունները և ինքնակենսագրական գիրքը հազիվ ավարտած՝ պահ է տալիս իր բժշկին՝ վստահելով միայն նրան և ասելով՝ «*Մա իմ ողջ կյանքն է*»: Եվ այս պարզ նախադասությունը դառնում է վեպի հիմնական առանցքներից մեկը:

Բացառիկ կնոջ կերպարով օժտված Շարլոթը ողբերգական ճակատագրի ոգեկոչումն է:

Վեպում Ֆոենկլինտսը հետամտում է հրեա կնոջ արվեստը ոգեկոչելու գաղափարը, անցնում է Շարլոթի անցած բոլոր ուղիներով՝ լիովին հայտնաբերելու նրա ինքնությունը:

*Devrais-je romancer son histoire?*

*Quelle forme mon obsession devait-elle prendre?*

*Je commençais, j'essayais, puis j'abandonnais.*

*Je n'arrivais pas à écrire deux phrases de suite.  
Je me sentais à l'arrêt à chaque point.  
Impossible d'avancer.  
C'était une sensation physique, une oppression.  
J'éprouvais la nécessité d'aller à la ligne pour respirer.  
Alors j'ai compris qu'il fallait l'écrire ainsi.*

*Պատմությունն իր պետք է վեպի վերածեի:  
Իմ սնեռուն գաղափարը ի նչ ձևով էր հայտնվելու:  
Նորից էի վերսկսում, փորձում էի, հետո թողնում:  
Երկու տողի հաջորդական շարադրանքը չէր ստաց-  
վում:*

*Կանգնում էի ամեն անգամ, երբ վերջակետ պիտի  
դրվեր:*

*Անհնար էր առաջ շարժվել:*

*Ֆիզիկական զգացում էր, բռնություն էր:*

*Երբ նոր տողից գրում էի, հարկադրաբար շունչ էի  
քաշում:*

*Այդ ժամանակ ես հասկացա, որ ճիշտ այսպես պետք  
է գրել:*

*Վեպում նա այսպես է բնորոշում իր գրքի առանձնա-  
հատկությունը՝ հանդես գալով որպես կերպար՝ պատմող:*

*Ճանապարհն այդ անցել էմ ես շատ անգամներ:*

*Նրա ոտքի հետքերը ինձ տանում էին իր ետևից ու ետ բերում:*

«Շարլոթ» վեպի բովանդակությունը, որ հեղինակի կողմից հանգամանորեն ուսումնասիրված ու մշակված թեմա է երիտասարդ հրեուհու կյանքի պատմության մասին, հեղինակը յուրահատուկ շարադրանքով է ներկայացնում: Նա մատուցում է Շարլոթի և նրա իրավիճակում հայտնված հրեա արվեստագետների ծանր վիճակը, ողբերգական ապրումները անկեղծ նկարագրությամբ, բայց զուսպ կերպով: Կերպարները բազմաբևեռացված են վեպում, հայտնվում են ընտանիքի ներսում, արվեստի ու գիտության աշխարհում, բարեգործների կերպարանքով, միաժամանակ հանդես են գալիս թուլակամ և արհասիրտ կերպարների, իրենց միջավայրին ու հայրենիքի նվիրյալների և չարամիտ-եսամուլների մթնոլորտում: Շարլոթի միջոցով ծանոթանում ենք բազմատեսակ մարդկանց, որոնց հետ կամա թե ակամա շփվել է նա: Մանկահասակ աղջիկը առնչվում է մահվան հետ՝ ապրելով մի ընտանիքում, որտեղ մոր կողմի ազգականներից շատ սերունդների ներկայացուցիչներ ինքնասպանություն են գործել: Սկզբում նա այդ մասին չգիտեր: Ընտանիքի անդամները որոշել էին գոնե նրան խնայել՝ չհայտնելով այդ սարսափելի պատմությունները, հատկապես մոր ինքնասպանությունը չպետք է նրա ոգին կոտրեր: Բայց իր ծագումով հպարտացող պապը, անձնական շահերից ելնելով, թքում է ողջ գաղտնիքը թոռնուհու երեսին և նոր ցավի տեր դարձնում նրան, այն միտումով, որ ինքը

պետք է գտնվի ուշադրության կենտրոնում, որովհետև արժանի է դրան և Շարլոթի տատին կորցնելուց հետո, պահանջները պետք է թելադրի բոլորին:

Հեղինակը սկզբից մինչև վերջ որպես կերպար է երևում վեպում, առաջին դեմքով է հանդես գալիս վեպի այն հատվածներում, երբ անձնական խոհերին է տուրք տալիս, երբ Շարլոթ Սալոմոնի, նրա արվեստի զարմանալի ուժն է ներկայացնում:

Վեպի շարադրանքը գեղեցիկ է և յուրօրինակ: Հեղեղված է ոճական տարբեր հնարքներով: Հեղինակը վեպի առաջին իսկ տողից ընթերցողին տանում է Շարլոթի աշխարհը նրա իսկ ոճամտածողությամբ՝ շարահյուսական սահուն ու ծանր քայլերով:

Տոենկլինոսին հեշտ չէր տրված այս դաժան պատմությունը մեկ շնչով ներկայացնել: Նա դառնում է իր կերտած աշխարհի անբաժան մասնիկը: Ապրում է խորությամբ համակված բոլոր կերպարների ցավի ու վշտի հետ: Շնչահեղձ է լինում, երբ շարադրում է նյութը, սկզբում այն առաջ չի գնում գրչի տակ: Բայց երկար մտորումներից հետո ելքը գտնում է: Նա պետք է շունչ քաշի, դադարներ տա ամեն նախադասությունից հետո, որ կարողանա ձևակերպել մտքերը: Վեպը, այսպիսով դառնում է երկարաշունչ պոեմ՝ սկզբից մինչև վերջ պահպանված ներքին ռիթմով: Յուրաքանչյուր տող մեկ նախադասություն է, որն ավարտվում է վերջակետով: Հարաբերական ընդմիջումից հետո, շարունակում է միտքը:

*Երբ նոր տողից գրում էի, հարկադրաբար շունչ էի քաշում:*

*Այդ ժամանակ ես հասկացա, որ ճիշտ այսպես պետք է գրել:*

Այժմ նա ազատ շունչ է քաշում: Եվ ընթերցողին է շունչ քաշել տալիս: Եվ թարգմանչին, բնականաբար, պարտավորեցնում վարվել իր պես:

Մի հանգամանք ևս, որ բնորոշ է տվյալ ստեղծագործությանը: Ֆոենկլինոսը խուսափում է այս ծանր պատմությունն ավելի ծանրացնել հույզերի նկարագրությամբ: Սակայն այս պարագայում ևս նա ամենևին չի խուսափում օգտագործել պատկերավոր արտահայտություններ, ոճական հնարքներ, բայց բավական զուսպ ձևով, ամենևին չծանրաբեռնելով բանաստեղծական տողերը: Արտաքին ձևի մեջ խուսափում է սենտիմենտալիզմին տուրք տալ: Պետք է ընդգծել, որ վեպի հերոսներին կերտելիս՝ նրա սկզբունքն է չչփոթել հուզականը սենտիմենտալիզմի հետ: Այնուամենայնիվ, իր կերպարները անկարող են խուսափել հույզից, հեղինակն ինքն էլ է հուզվում նրանց հետ դժվար կացությունների առջև: Սենտիմենտալ չլինելով՝ իր հերոսները արտասվում են՝ ընթերցողին ևս համակելով նույն դյուրագագացությամբ: Բայց չենք կարող անտեսել այն փաստը, որ սենտիմենտալիզմը, այնուամենայնիվ, առկա է վեպում, այն կերպարները կերտելիս, ովքեր խիղճ չունեն ու դաժան հատկանիշներով են օժտված: Այս ամենը ներքին զգացո-



դությամբ վերլուծելով՝ Ֆոենկլինոսը համապատասխան բառապաշար է ընտրում վեպում՝ այն ավելի տպավորիչ դարձնելով, հակադրելով իրար դրական ու բացասական կերպարները:

Ֆոենկլինոսի նախադասությունների շարադրանքը համառոտ է, հիմնականում գրառվում է պարզ շարադասությամբ, երբեմն մեկ-երկու բառով: Հաճախ ենք նկատում, որ ծանր դեպքեր նկարագրելիս, հեղինակը միանգամից հաջորդ տող է անցնում դեռ ասելիքը չավարտած: Շարունակում է շունչ քաշելուց հետո: Սա նույնպես, հուզականությունը թաքցնելու յուրատեսակ ձև է, հեղինակի գտած հնարքը, ոճական միջոցներից մեկը, որ նույնությամբ վերարտադրվում է թարգմանության մեջ: Բազմակետերը նույնպես մեծ դեր ունեն վեպում: Այս հնարքով նա ազատում է իրեն խոր հուզականությանը տուրք տալուց՝ խնայելով նաև ընթերցողին, զգալով, որ նախորդ միտքը կոկորդից բռնած խեղդում էր իրեն:

«Շարլոթ» վեպի դրվագներից մեկում զագիր մի տեսարանի նկարագրություն կա, երբ մեծ հայրը անընդհատ հիշելով և վկայակոչելով իր ազնվագարմ ծագումը, ամեն կերպ ուզում է հեռացնել թոռնուհուն այն մարդկանցից, ովքեր առնչվում և համակրում են նրան: Խանդն է բուն դրել նրա սրտում: Թոռնուհին պետք է միայն իրեն պատկանի(եր)՝ ամեն տեսակի պիղծ միտումներով: Նա նույնիսկ չի խնայում երիտասարդ աղջկան հոգեկան տվայտանքների ենթարկելով, երբ առիթն օգտագործելով, շարտում է նրա

երեսին մոր կողմից ընտանիքում տեղի ունեցած ողբերգական դեպքերը, որից անմասն չէին մնացել նաև սեփական աղջիկները: Այստեղ Շարլոթն իմանում է, որ իր մորաքույրը և մայրը նույնպես ինքնասպան էին եղել ընտանիքի շատ անդամների նման: Պապը գտնում է, որ այս պատմությունների մեջ ամենից շատ ինքն է տուժել, ինքն է տառապել: Եսամուլը, կորցնելով կնոջն ու նրա անձնվեր հոգատարությունը, այժմ նույնը պահանջում էր թոռնուհուց, նա միայն իրեն պետք է ծառայի ու պատկանի, քանի որ միայն ինքն է մնացել նրա կյանքում:

Ընթերցողը կապվում է Շարլոթի հետ հուզական բուլոր թելերով, զգում է նրան՝ ծանր իրավիճակներում դժվարին կացությունից դուրս գալու ելք չտեսնելով: Որովհետև նա նույնպես դատապարտված էր մեռնել երիտասարդ հասակում: Որքան էլ հեղինակը արհեստականորեն խորհրդավորություն չի ստեղծում նրա կերպարի շուրջ, ընթերցողն, այնուամենայնիվ, ապրում է գաղտնախորհուրդ արվեստագիտուհու կյանքի յուրաքանչյուր պահը գրական հնարքների շնորհիվ: Շարլոթը նույնպես երբեմն ընկնում է հուսահատության գիրկը՝ անարդարությունների ու չարիքին դեմ առ դեմ կանգնելով թե՛ ծննդավայրում՝ Գերմանիայում, թե՛ տարագրության մեջ՝ Ֆրանսիայում, ուր մուտք են գործում նույն չարագույժ գերմանական նացիստները, ինքն իր մեջ ներամփոփված՝ նա երբեմն մտորում է ընտանեկան նույն հիվանդությանը տուրք տալ: Սակայն սրտում բուն դրած մեծ սերն ու արվեստի կախարդական ուժը ետ են պահում ամեն անգամ, երբ ուղեղը մղում է նրան դեպի

մահ: Նա ետ է գալիս՝ թոթափելով չար մտքերը և տրվելով արվեստին ու սիրուն:

Տոենկինոսին հաջողվել է ճշգրիտ ու համոզիչ նկարագրել Շարլոթի ապրած ժամանակաշրջանի երևույթները՝ ծանակելով իշխող օրենքներն ու իրավունքները, սուր քննադատության ենթարկելով անտիսեմիտիզմը և դրա ծանր հետևանքները: Շարլոթն հասել է հուսահատության գիրկը՝ վտարվելով ամեն տեղից, բոլորից, հատկապես իրեն սփոփող արվեստի աշխարհից, ուր, այնուամենայնիվ, նրան հաջողվել էր թափանցել, Գեղարվեստի ակադեմիա, քանզի դեռ մնացել են լավ մարդիկ, որոնք գնահատում են ճշմարիտ արվեստը: Գեղարվեստի ակադեմիայում Շարլոթը արժանացել էր տարվա առաջին բարձրագույն մրցանակին: Ընտրությունը կատարվել էր փակ գաղտնի քվեարկությամբ, ժյուրիի անդամները չգիտեին՝ ում աշխատանքն են գնահատել: Բայց երբ բացվում է ծրարը, քվեարկությունը համարվում է անվավեր, որովհետև հրեան իրավունք չունեի ամենաբարձր տեղում հայտնվել: Հիտլերի էլույթում, որը վերարտադրված է վեպում, շեշտվում է այդ միտումը, և Շարլոթին զրկում են մրցանակից: Նրա ապրումները հեղինակը շատ նրբորեն է վերարտադրում հատուկ բառապաշարով ու նկարագրական պատկերավոր արտահայտություններով:

Տոենկինոսի բառապաշարը և գեղարվեստական պատկերները բավական հեղված են վեպում, որոնց կիրառմամբ կերպարները և ծավալվող գործողությունները ավելի հստակ ու անմիջական են դառնում: Օրինակ, հոգե-

կան հիվանդության հաճախ նկարագրված դեպքերը արդյունք են մարդկային տառապանքների՝ աքսորավայրի, դաժան արարքների, սիրո պակասի: Դրանք ավելի լավ են արտահայտում կերպարներին համեմատության, փոխաբերության, փոխանունության, մակդիրների, շրջաբանության, անձնավորման, դարձվածքների և այլ միջոցների կիրառմամբ:

*Il observe la jeune femme nue et offerte.*

*Telle une preuve giflée par la vie.*

*Երիտասարդ մերկ ու բացված աղջկան է նայում անթարթ:*

*Ապացույցը՝ կյանքն ապտակած լինի կարծես:*

*Ses vêtements mouillés deviennent lourds.*

*La poussent au plus profond.*

*Les vagues meurent sur elle.*

*Elle avale l'eau salée.*

*Թաց հագուստներն են ծանրացել:*

*Ու քաշում են խորքը ծովի:*

*Ալիքները մահանում են մարմնի վրա:*

*Կուլ է տալիս ջուրը աղի:*

Թարգմանության մեջ ջանք չի խնայվել համապատասխանաբար վերարտադրել տեքստի ոճական առանձնահատկությունները՝ բառապաշարի ճիշտ ընտրությամբ, դարձվածքների, ասույթների պատկերավոր արտահայտությունների համարժեքների փոխանցմամբ՝ պահպանե-

լով, իհարկե, թարգմանվող լեզվի քերականական, լեզվական պահանջները, լեզվաոճական տարբերանշանները, փոխանցվող լեզվում հանդես եկող համարժեքներով:

Այս վեպում մեծ դեր ունեն նաև ռազմական, բժշկագիտական, երաժշտական, գեղանկարչական, արվեստի ու գրականության և այլ ոլորտներում կիրառվող եզրույթները, անվանի մարդկանց անունները և տեղանունները:

Հայտնվում են նորանոր կերպարներ, որոնց շուրջը միայն հրեաների հանդեպ ունեցած աստելությունն է պտտվում: Բայց նրանց մեջ էլ կան բարեհոգի մարդիկ: Ֆոենկինոսը ներկայացնում է անխնա դաժանությունները հակակրանք ներշնչող մակդիրներով, նկարագրությամբ, որը հատուկ բառապաշարով է արտահայտվում:

Օրինակ, էսեսականի դաժան կերպարը նկարագրելու համար նրա արտաքին տվյալները նույնպես հատուկ բառերի ընտրությամբ է ներկայացվում:

*Sa biographie **donne la nausée.***

*C'est un petit brun aux cheveux crépus.*

*Extrêmement chétif, **son corps paraît tordu.***

*Avec une épaule plus haute que l'autre.*

*Son malaise de ne pas correspondre au type aryen **renforce sa haine.***

*Կենսագրությունն այդ ճիվաղի սրտխառնոց է առաջացնում:*

*Կարճահասակ, թուխ, գանգրահեր:  
Անչափ նիհար, ծռնոված է մարմինն ասես:  
Ուսերից մեկն ավելի կախ, քան թե մյուսը:  
Հիվանդ տեսքը, որ հարիր չէ արիացուն, ատելությունն է  
իր ուժգնացնում:*

Ահա ճիվաղի արտաքին ու ներքին նկարագրությունը: Այս ամբողջական վերարտադրությունը թարգմանչից պահանջում է բառապաշարի, շարահյուսության անհատական կիրառման ճիշտ ու խորը ուսումնասիրություն հեղինակի բանեցրած ոճական հնարքները, վեպի կուռ կառույցը ճիշտ վերարտադրելու համար:

Երկարաշունչ չափածո այս վեպի առանձնահատկություններից մեկը, ինչպես նշեցինք, կարճ, ընդհատված, սեղմ տոնայնությամբ տողերն են, որոնք լիովին համապատասխանում են հեղինակի ասելիքին՝ արվեստի և խելագար ուղեղի միջև գտնվող կյանքի պատմության նկարագրմանը: Յուրաքանչյուր տողում մեկ համառոտ նախադասության չափի պահպանումով նախադասությունը կարծես փախուստ է կատարում դեպի առաջ, ինչպես Շարլոթի անցած ճանապարհն է: Ընտանիքը, սերը, մահը, հիվանդությունը, անտիսեմիտիզմը միախառնվում են այն ժամանակի մեջ, որ գործում են ընդդեմ նրա գլխավոր կերպարի: Վերջինս զգալով, որ այս ամենը կապ ունի իր մոտալուտ մահվան հետ, ուզում է հնարավորին չափ արագ ավարտին հասցնել գործը՝ ստեղծագործական աշխատանքը, իր կյան-

քի պատմությունը, որովհետև ժամանակը սուղ է: Որքան էլ նրա մեծ մայրը խենթության նուպայի պահին կանխագուշակում էր բոլոր հրեաների մահը, Շարլոթը կամովին ուզում էր անտեսել այդ չարագուշակությունը, խուսափել այդ մտքից, որպեսզի իր ստեղծագործությունը հասցնի նպատակին: Ուզում է հոգում առաջացած ընկճախտը հաղթահարել, երկարեցնել կյանքը հանուն իր մեջ ծվարած երկու կյանքերի՝ արվեստի կյանքի, ծնվող զավակի կյանքի: Նա թաքնվում է մահից, որպեսզի հասնի ուզածին: Պիտի նկարի, պիտի գրի, ժամանակավորապես խույս տա անխուսափելիից: Նույն արվեստի շնորհիվ է ուժ գտնում իր մեջ խուսափել ընտանիքի վրա իջած անեծքից: Որքան էլ Շարլոթը մաքառում է դրա դեմ, այնուամենայնիվ, ճակատագրից խույս տալ չի կարող, որն այս դեպքում իրականանում է բարբարոս նացիստների ձեռքով: Նրանք անխղճորեն տնօրինում են մարդկանց կյանքը, անխնա կերպով հնձելով ու ոչնչացնելով տաղանդներին, ինչպես բոլոր ժամանակներում: Նույնիսկ Շարլոթի կյանքի վերջին պահի նկարագրությունը հեղինակը փորձում է սառնասրտորեն, պարզ բառերով ներկայացնել: Հաջողվում է: Մասայական ոչնչացում:

Պարզ բառերով արտահայտվող միտք: Վերջակետ:  
Նոր տող:

*Եվ մտնում են հսկայական սենյակի մեջ:  
Որոշ կանայք իրար ձեռք են զգույշ բռնել:*

*Ու փակվում են դռները այդ՝ գույգ կղպանքով,  
ինչպես բանտում:  
Մերկությունը պատ լույսի տակ փորփրում է  
մարմինները:  
Երևում է Շարլոթը իր ուռած փորով:  
Մյուսների մեջ չի շարժվում:  
Թվում է, թե հեռանում է ժամանակից:  
Որպեսզի հար մնա այստեղ:*

Տեքստը սաղմոսերգություն է հիշեցնում՝ նախադասությունների համառոտ հաջորդականությամբ: Երբեմն հեղինակի բառապաշարը այս պարագայում ի հայտ է գալիս ավելի շեշտված: Սկզբից մինչև վերջ ընդգծված է մարդկային կյանքի վրա գործադրված ճնշումը, կերպարների վրա իջած ծանրությունը: Բանտ: Աքսոր: Գազախցիկներ...

Ֆոնենկլինոսը միաժամանակ խուսափելով լավկանությունից, որ հատուկ է սենտիմենտալիզմի ժանրին, չի ընդգրկում տողերի մեջ կերպարներին բնութագրող այնպիսի բառեր, որոնք տեքստի պահանջած բովանդակությունից պետք է բխեին: Իր կերպարները շրջում են դեմքը, որ այլոք չտեսնեն իրենց ցավն ու վիշտը, արցունքները: Նրանք կարող են նաև անողոք դառնալ, անողոք պայմաններում, ինչպես Շարլոթը իր մեծ հայրիկի պարագայում:

Այս չափածո վեպը թարգմանելու համար անհրաժեշտ էր նախ և առաջ գտնել ստեղծագործության ճիշտ տոնայնությունը, հիմնական ջիղը, երաժշտականությունը, չա-



փր: Դրանք անտեսելու կամ չնկատելու դեպքում թարգմանված գործը բնագրին բնավ չէր կարող համարժեք լինել, թարգմանված լեզվում այն կվերածվեր սովորական, պարզունակ շարադրանքի:

Տվյալ տոնայնության պարտադրանքը նկատելի է առաջին իսկ տողից: Այն հուշում է «Շարլոթ» վեպի անսովոր շարադրանքի մասին, որը հատուկ չէ պատմական իրադարձության նկարագրությանը, ոչ արձակին, ոչ պոեզիային: Սա հատուկ գրելաոճ է: Սա յուրատեսակ ստեղծագործություն է իր առանձնահատկություններով:

Շարլոթն իր գծագրերի ու կտավների հետ միասին իր բժշկին պահ է տալիս նաև մի ձեռագիր գրքույկ «*Կյա՞նք, թե՞ թատրոն*» վերնագրով, որտեղ իր հռետորական հարցադրումներն են, իր ապրած կյանքի ճշմարտությունը հայտնաբերելու նպատակը: Այսպիսով, գեղանկարիչ-գրողը թույլ է տալիս իրենից ներշնչված վիպասան Ֆոենկլինտսին նույն հռետորական հարցադրումները կատարել (որը նույնպես հեղինակի ոճական հնարքներից է) և վեպում ներկայացնել իր անունից, տարբերակներ առաջարկել, անշուշտ, անասելիորեն ավելի բարդ հանգամանքներում:

Այս վեպը բանաստեղծությանը հատուկ քնարականություն չունի, ոչ էլ շեշտված գեղեցիկ ներդաշնակությամբ է գրված, որտեղ երաժշտությունը գաղտնաբար է իր դերը կատարում: Բայց ամենևին անտեսված չէ ներքին ռիթմի առկայությունը՝ ծայրից ծայր, առանց սկզբունքային նկատառումների: Տողերը հատաձների են բաժանվում, շատ տեղերում ռիթմն ընհատվում է: Թվում է, թե վեպն ավելի շատ համապատասխանում է օպերետային ժանրին: Հեղի-

նակը դիտումնավոր որդեգրում է Գեղանկարչուհու գրական-գեղարվեստական մեթոդը, ոճը, նրա պես տեսնում ու լսում է կտավներում գետեղված և դուրս թափվող գույները, վրձնի յուրատեսակ շարժումները, երաժշտական հնչյունները, երգերը, որոնց ներքո են նրա վրձինն ու գրիչը շարժվել՝ կազմելով իր կենսագրության, անցած ճանապարհի նկարագրության շարադրանքը և պատկերները: Շարլոթի այս նույն սկզբունքն է ընտրել Ֆոենկինոս վիպասանը, որի մասին ինքն է ակնարկում վեպում՝ սեփական ոճական հնարքների հավելումով: Ֆոենկինոսի չափածո տողերը, հաճախ քնքշություն արտահայտող պատրանք ստեղծելով, ընթերցողին նաև սարսուռ են պատճառում:

«Շարլոթը» շարադրված է անկեղծ տոնով ու զգացողությամբ:

Զգացմունքներ արտահայտող յուրատեսակ ստեղծագործություն:

### Գրականության ցանկ

1. Աբեդյան, Մ. (1967) *Հայոց լեզվի տաղաչափություն* (հատոր Ե), ՀՍԳԱ հրատ., Երևան:
2. Բահաթրյան, Ա. (1984) *Հին հայոց տաղաչափության արվեստը*, Երևան:
3. Ֆոենկինոս, Դ. (2016) *Շարլոթ*, Անտարես հրատ. (Թարգմ. Նվարդ Վարդանյան) Երևան:
4. Foenkinos, D. (2014) *Charlotte*, éd. Gallimard, Paris.
5. Marcel, C. (1959) *Le style et ses techniques*, éd. Presses

universitaires de France, Paris.

6. Michel Le Guern (1973) *Sémantique de la métaphore et de la métonymie*, Paris.
7. Mounin, G. (1963) *Les problèmes théoriques de la traduction*, éd. Gallimard, Paris.

**NVART VARTANIAN** - *La spécificité de la composition, les moyens stylistiques du roman «Charlotte» de David Foenkinos et sa traduction en arménien* - Dans son roman «Charlotte» en vers blancs David Foenkinos trouve le ton juste, sans quoi, le livre tombait dans le grotesque ou le vulgaire. Dès les premières lignes le ton s'impose, le traducteur se soumet à son savoir-faire. L'auteur écrit l'histoire de Charlotte Salomon. Il invite ses doutes et ses investigations à rejoindre la trame. Le résultat est formidable. Ni livre d'histoire ni récit. Un roman. Le romancier est apprécié pour son texte empreint de sérieux. Il fait défiler toutes les étapes qui mènent à l'extermination des Juifs avec un vocabulaire juste. Charlotte trouve son salut dans la peinture avec des couleurs aussi joyeuses et modernes alors que les conditions de vie étaient sombres et infernales. Foenkinos emploie dans le texte les mêmes conditions d'une plume abondante grâce à son ingéniosité. Le traducteur révélant tous les moyens artistiques employés par l'auteur, les reproduit dans l'œuvre traduite en arménien.

**Mots-clés:** savoir-faire, investigation, trame, rédaction du roman, rythme du vers libre, vers rythmique, moyens

*stylistiques, image poétique, termes linguistiques et stylistique, expression figurée, imagée, reproduction équivalente.*

**НВАРД ВАРДАНЯН** - *О строении и особенностях стилистических приемов в армянском варианте романа Давида Фонкиноса "Шарлотта" - Данная статья рассматривает стилистические приемы в армянском варианте романа Давида Фонкиноса «Шарлотта». В романе представлена история жизни Шарлотты Саломон, где в основном выдвигаются сомнения и исследования автора, проведенные параллельно с сюжетной линией. Итог поразительный: это не историческое произведение и не рассказ, это - серьезный роман. Для романа в стихах автор нашел правильную тональность, без которой произведение имело бы простое и грубое звучание. С первых же строк эта тональность обязывает переводчика следовать мастерству автора.*

**Ключевые слова:** *Давид Фонкинос, литературное мастерство, изложение романа, стилистические приемы, художественный образ, сюжетная линия, внутренний ритм.*